ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»--------- 2016թ. N---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 451-Ն որոշումը `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Մուշեղ Շահբազյանին սեփականության իրավունքով պատկանող Աճառյան փողոցի հ.88 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 400.0 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 23.04.2003թ. հ.1025894 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Շիրազի փողոցին հարակից տարածքում և տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 615.51 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Մուշեղ Շահբազյանին սեփականության իրավունքով պատկանող, Աճառյան փողոցի հ.88 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 400.0քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 23.04.2003թ. հ.1025894 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Շիրազի փողոցին հարակից տարածքում և տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 615.51քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Մուշեղ Շահբազյանին սեփականության իրավունքով պատկանող քննարկվող հողամասում ընդհանուր տարածքների ավելացման, կանաչ գոտիների ստեղծման նպատակով վարչական շրջանի կողմից ձեռնարկվել են բարեկարգման և քաղաքաշինական իրավիճակի հստակեցման աշխատանքներ: Սեփականատիրոջ հետ իրականացված բանակցությունների արդյունքում վերջինս դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետարան՝ հայտնելով իր համաձայնությունը հողամասերի փոխանակության վերաբերյալ: Հողամասերի փոխանակությունը հնարավորություն կտա տվյալ հատվածում ունենալ ավելի բարեկարգ, կանաչապատ և կանոնակարգված իրավիճակ:

Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասը գտնվում է տարածագնահատման 7-րդ գոտում, իսկ փոխանակման համար քննարկվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը գտնվում է տարածագնահատման 8-րդ գոտում, որոնց կադաստրային արժեքները կազմում են 1 809 600-ական ՀՀ դրամ՝ պահպանելով հողամասերի համարժեքությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու համապատասխան ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ